



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 16 » յնվարտեմբերի 2019թ.

№ 841-ձ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 342-L  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-L որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 6-ի «Մաքսային գործառնությունների իրականացման վայրերը սահմանելու մասին» N 342-L հրամանի 2.1-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.1. ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող ավտոտրանսպորտային միջոցների (բացառությամբ երկաթուղային տրանսպորտով փոխադրվող կամ ավտոարտադրող ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող և (կամ) գործարանային չչահագործված ավտոմեքենաներ ներմուծող ընկերությունների



կողմից ավտոսրահներում առաջնային վաճառքի համար նախատեսված չշահագործված ավտոմեքենաների ներմուծման դեպքերի և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար նախատեսված ավտոմեքենաների կամ դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամների, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների, դիվանագիտական ներկայացուցչությունների վարչատեխնիկական անձնակազմի անդամների, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական ծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կողմից, եթե նրանք մշտական հիմունքներով չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն, հյուպատոսական հիմնարկների սպասարկող անձնակազմի անդամների և նրանց ընտանիքի անդամների անձնական օգտագործման ավտոմեքենաների ներմուծման դեպքերի), «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում», Վերամշակում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունները, ինչպես նաև վերոնշյալ ապրանքային դիրքին դասվող և ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով, որպես անձնական օգտագործման ավտոտրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների (բացառությամբ երկաթուղային տրանսպորտով փոխադրվող կամ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամների, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների, դիվանագիտական ներկայացուցչությունների վարչատեխնիկական անձնակազմի անդամների, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական





ծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կողմից, եթե նրանք մշտական հիմունքներով չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն, հյուպատոսական հիմնարկների սպասարկող անձնակազմի անդամների և նրանց ընտանիքի անդամների անձնական օգտագործման ավտոմեքենաների ներմուծման դեպքերի) նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում, իսկ ՀՀ սահմանի հայ-իրանական հատվածով մաքսային տարածք ժամանման դեպքում Հարավային մաքսատուն-վարչությունում կամ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում՝ անձի ցանկությամբ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



Recoverable Signature

X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

